ԵՎՍ ՄԵԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Ազատամարտիկների եւ Կանանց Վետերանների Միություն հասարակական կազմակերպությունը ունի 43 մասնաճյուղ Հայաստանի տարածքում եւ արտերկրում: Վերջերս դրանց ավելացավ եւս մեկը: Արարատի մարզի Արտաշատ քաղաքում բացվել է ԱԿՎՄ մասնաճյուղ: Հիմնադիր ժողովին մասնակցում էին ԱԿՎՄ նախագահ Միհրան Մովսիսյանը, փոխնախագահ Ժուլվեր Խաչատրյանը եւ կենտրոնական ապարատի աշխատակիցները: Կազմակերպության նախագահն իր ելույթում ասաց, որ կազմակերպությունը ամեն կերպ ջանում է միության անդամներին զերծ պահել քաղաքական խարդավանքներից եւ կոչ արեց չդառնալ կուսակցությունների կամակատարն ու զոհը: Նա նաեւ ավելացրեց, որ կազմակերպությունը փորձում է օգտակար լինել տնտեսական ճգնաժամի եւ կաշառակերության վերացմանը, բնակչության համար նոր աշխատատեղեր ստեղծելուն, սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելուն: Մասնաճյուղի նախաձեռնող խումբը պարտավորվեց այսուհետ հավատարիմ մնալ ԱԿՎՄ-ի որդեգրած սկզբունքներին՝ միասնական լինել ընդունված որոշումների իրագործման գործընթացում, ինչպես նաեւ չանտեսել ԱԿՎՄ վարչության կայացրած որոշումներն ու առաջնորդվել դրանցով:

ԱԿՎՄ-ն չի սահմանափակվում իր գործող մասնաճյուղերով եւ առաջիկայում պատրաստվում է բացել մասնաճյուղ Սյունիքի տարածաշրջանում: